


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Գուլկարիոյ համար
Տարեկան Ֆրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան Ֆրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի ճարաք օրերը : Միս-
նուցման տողը 10 Սանդիմ : Երկու ք/ի ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիմ :
Զհրահարակուած գումարի մը ետ յսրուիր :

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

ԷՋՄԻԱՆԻՆԵՆ ԼՈՒՐԵՐ

Այս միջոցիս Բեդրսպուրկի մեջ գու-
մարուած Բատուածարանական միջազգային
Համաժողովին անդամներէն յիսուն հոգի ի-
րենց աշխատութիւնները աւարտելէ ետքը
Էջմիածին պիտի երթան անկէջ Արարատ լե-
ռը ելլելու համար :

Համաժողովին կարգադրիչ մասնախում-
բը յատուկ նամակաւ փափագ յայտնած է
Վեհափառ Կաթողիկոսին որ այս օտարազգի
հիւրերուն արժանաւոր ընդունելութիւն կա-
տարուի Մայր Աթոռին կողմէ :

Հայրապետական կարգադրութեամբ
յանձնաժողով մը կազմուեր է , որուն ան-
դամներն են Տ. Սուքիաս Արքեպիսկոպոս և
Տ. Ղեւոնդ ու Տ. Աշոտ վարդապետներ , ո-
րոնք ձեռնարկած են հարկ եղած պատրաս-
տութեանց . աստուածաբանական անդամնե-
րուն բնակութեան պիտի յատկացուի Ճմա-
րանի վերնայարկը :


Առաջիկայ սեպտեմբեր 14ին , խաչվե-
րացի տօնին օրը Միւսնուորհնութիւն պիտի
կատարուի ի Ս Էջմիածին :

Լուր կայ թէ Վեհափառ Կաթողիկոսը
գիտաւորութիւն ունի ի մօտոյ Բեդրսպուրկ
ուղիւորելու :

ՏԵՂԱԿԱՆ

Անցած շաբաթ օրը ցորեկէն մէկ ժամ
ետքը , մկրտուելու համար հիւանդոտ նորա-
ծին մը կը տարուի տեղւոյս Ս. Եկեղեցին :
Շրջանի Տ. Հայրը , ըստ իւր սովորութեան ,
նայն միջոցին եկեղեցիէն դուրս շրջան ընելու
ելած ըլլալէն , ժամկոչ և լուսարար սագին ան-
դին կիշնաւ քահանայ մը ճարելու ու մէկ ժամ-
ուան փնտոտութէ ետքը՝ քահանայ մը կը
գտնեն ու եկեղեցի կը բերեն , բայց խեղճ
նորածինը այն միջոցին մեռած ըլլալուն՝ ա՛լ
հարկ չէր մնացած մկրտելու . ու ժամկոչ
աղբարը նայն անմիւսն երախայն թեւին
տակն առած կը տանի կը թաղէ ըստ օրինի
առանց կրօնական արարողութեան :

Հիմա մեղ քը ո՞րինն է . — Երախային ,
որ չէ սպասած եւ մկրտուելէ առաջ աճա-
պարած է անդիի աշխարհք ճամբորդելու . ա-
նանկ չէ՞ Տէր Հայր :



ՀԱՆԳԻՍՏ

Տ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՀԱՆԱՅ ՅՈՎՀԱՆԷՍԵԱՆԻ
(Շումայի)

որ յետ երկարատե հիւանդութեան սեպ. 1
երկուշաբթի հանգեալ ի Տէր, ի հասակի 60
ամաց:

Շումայի Թաղ. Խորհրդոյ խնդրանք
Պուլկարիոյ եւ Ռումանիոյ կաթողիկոսական
այցելու հովիւ Գեր Տ. Արսէն վարդապետ
վեհոյնի փութացել է ի Շումայ, վախճան-
եալ քահանային Օծման և թաղման հան-
դիսին նախագահելու:

Հանգուցեալը, որ բարեկիրթ և հե-
զասամբոյր բնաւորութեամբը սիրելի եղած
էր Շումայցիներուն, 1865ին Կ. Պոլիս եր-
թալով Խասգիւղի Ս. Ստեփանոս եկեղեցւոյն
մէջ քահանայ ձեռնադրուած էր իր ծննդա-
վայրի (Շումայ) Ս. Աստուածածնայ եկե-
ղեցիին վրայ, ի ձեռն հոգելոյս Տ. Ներսէս
Պատրիարքի, որ այն ատեն քարոզիչ էր ի
Խասգիւղ:

Խմբագրութիւնս իր խորին ցաւակցու-
ցութիւնը կը յայտնէ հանգուցելոյն սգակիր
ընտանեացը և պարագայիցը:

Ռուսճուգէն մեզ կը գրեն թէ Գեր
Տ. Արսէն վ. վեհոյնի, որ այժմ ի Շում-
լա կը գտնուի, մտադիր է այցելել նաև
Պուլկարիոյ Սիլիսդրէ եւ Բազարճըզ քաղաք-
ները, ուր կատարելէ յետոյ իր հովուական
պարտականութիւնը վերստին պիտի դառնայ
ի վառնա:

Ո՛Վ ԴԱՐՔ, Ո՛Վ ԲԱՐՔ

Աթէնքէն կը գրեն Բիւզանդիոնէի.

«Ասկէց ութ ամիս առաջ հոսգտնուող
հայերը եգիպտոսէ եկող Տ. Գարեգին Ար-
ծրունի քահանային յորդորանօքը մատուռ մը
բացած էին, բայց մէկ ամիս ետքը գոցուե-
ցաւ հասոյթի նուազութեան պատճառաւ և
քահանայն մեկնեցաւ:

«Անցեալները դարձեալ եգիպտոսէ հոս
կուգայ քահանայ մը, իբր անցորդ, Պրու-
սացի, ընտանեաց տէր և երիտասարդ, Տ.
Գէորգ Հիւրմիւզեան, որուն անցեալն եգիպ-
տոսի ազգայնոց ծանօթ է իր սիմէոնակա-
նութիւնով եւ Ս. Միլոնի տեղ նպարա-
վածառէն 10 փարայի ձիթախղ առնելով՝
Ջակագիկի մէջ ազգայնոյ մը երախան մկրդ-
տելովը:

«Սա Աթէնք կ'ենէ, ժողովրդին կը ծա-
նօթանայ և անոնց կարծիքը կառնէ թէ՛ վե-
րստին փափագ կ'զգա՞ն վերաբանալ մա-
տուռը: Կը հաւանին: Կ'ըսէ թէ՛ «Ես Տէր
Գարեգինի պէս անճարակ քահանայ չեմ»,
ամեն դժուարութիւն վրաս կ'առնեմ, մինչև
իսկ Պատրիարքարանի կը դիմեմ՝ որ աջակ-
ցութիւն ընէ: Եւ որովհետեւ առաջին ան-
գամ Պատրիարքարանի դիմուած չէր, ժո-
ղովուրդը կը համոզուի ըսելով թէ՛ «հայտէ
բեզ նայինք տէր պապա, Աստուած ամօթով
չի հանէ:»:

Քահանայն հանգանակութեան կը ձեռ-
նարկէ սա իմաստով. «— Ստորագրեալքս,
Աթէնքի եւ Պիրէոնի հայ գաղթականներս,
հայ լուսաւորչական եկեղեցւոյ ջերմ ըզ-
գացումներէ մղեալ, կը փափագինք հիմնա-
պէս վերաբանալ Ս. Մատուռը, շնորհիւ Տէր
Գէորգ քահանայ Հիւրմիւզեանի: Այս առ-
թիւ, սիրայօժար և մեր կարողութեանց հա-
մեմատ կը վճարենք մեր Օգոստոսի ամսա-
կանը կանխիկ, վասն վարձման մատչան
տեղին:»:

Սոյն գրութիւնը ժողովրդին կը ներ-

կայացնէ. ամենայեալն չքաւորն իսկ մէկ տրախմի ամսական կը գրուի, որ իր երկու երեք օրուան աշխատութեան արգիւնքն է:

Այսպէս կը սկսի հանգանակել թէ՛ Աթենքի եւ թէ՛ Պրիէոնի հայերէն 150 տըրախմիի մօտ գումար մը, որուն պակասն ինք պիտի ամբողջացնէր Պատրիարքարան կամ այլուր զիմեւով: Ժողովուրդը արգիւնքին կը սպասէր, այն յուսով որ Ս. Աստուածածնայ տօնին մատուցը պիտի բացուի եւ տուաջին Ս. Պատարագը պիտի տեսնէ:

Հարաւ ժ մը կ'անցնի՝ բահտնայն մէջտեղ չեններ, Պրիէոն է, հանգանակութեան համար, եւ գիշերներն ալ հոն կ'անցնէ:

Կ'անցնին քանի մը օրեր եւս, ու ահա յանկարծ կը լսուի որ կծիկը զրեր է, առանց երբեք մէկու մը մնաս բարով ըսելու, գէպ ի վառնա, ուր կը յուսացուի որ փայլուն ընդունելութիւն մը պիտի գտնէ իր ճարպիկ նենգաւորութեամբ, ինքզինքը ջերմ կըրօնամոյ մը ներկայացնելով: Գոնէ մնաս բարով մ'ալ չէի՞ն արժեքայդ տրախմիները:

Պ . Գ


Հայեցի — Վերոյիշեալ քահանայն բաղաքս հասաւ եւ ի Քեզ տէր յուսացայ, մի՞ աւմայեցից յարիսեալն ալելուբը ըսքանչելի եղանակաւ եւ խղճի կատարեալ հանդարտութեամբ երգելէ ետքը, Աթենքի մէջ խոստացած պատարագը հոս ըրաւ ու նուիրատուներուն հասցէին յանձնեց նամակ մը՝ որ անշուշտ տրախմիներուն մնաս բարովը կը պարունակէր:

Պուրկարական կարեւոր քաղաքի մը մեր մասնաւոր թղթակիցը կը գրէ թէ՛ հայ գաղթական բժիշկ մը քանի մը օր առաջ իրեն ներկայող հայ կնոջ մը հիւանդ աղջկը ուշադրութեամբ քննելէ ետքը, երբ կը տեսնէ սր դժբաղդ կինը « շնորհակալ եմ » ու կը յայտնէ իր երախտագիտութիւնը, իսկոյն կը բարկանայ եւ դեղագիրը պատառ պատառ ը

նետով, կնոջ եւ աղջկան երեսին կը նետէ զայն:

Այս յուրը ո՛րքան ճիշդ նոյնքան ալ զարմանալի կը թուի մեզ, վասն զի չենք կրնար երեւակայել որ հայ բժիշկ մը, ու այն ալ գաղթական, չը գիտնայ չքաւորութիւնը որ կը տիրէ Պուրկարիոյ մէջ, ու այսպիսի անվայել ընթացք մը բռնէ հանդէպ իր արենակիցներուն:

Հերքումներու առջեւ միշտ բաց են մեր էջերը:



Լուսնայ գրական հանդէսի տէր եւ հրատարակիչ Տ. Գիւտ քահանայ Աղանեանի, որ երկու անգամ Խղմիրեանց Սահակ—Մեսրոպայ մրցանակաբաշխութեամբ պատկուած է, Ս. Հայրապետն յատուկ կոնդակաւ Աւագ քահանայութիւն շնորհեր է:

Մահրութիւն

Մաքրասէր եւ հոգածու տիկնայք միշտ կը գանգատին ծխախոտին մուխին համար թէ կը փնտսէ կահ կարասեաց եւ պատուհաններու վարագոյրները կը դեղնեցնէ. ուստի ուրախ պիտի ըլլան երբ իմանան թէ ծխախոտին մուխիրը խիստ ընտիր կերպով կը մաքրէ ոսկեղէն, արծաթեղէն, պղնձեղէն եւ թիթեղէ անօթները, եւ թէ ծխախոտի մուխէն ազատելու համար բաւական է սենեակին մէջ թըրջած սպունգ մը կախել, երբ պատուհանները բանալն անկարելի է:

Սպունգը ծխախոտին մուխը իրեն կը քաշէ երբ միշտ թրջուած պահուի:

Կը խնդրենք մեր Պատուարժան Բաժանորդներէն որոնք տակաւին չեն վճարած բարեհաճին ընդ հուպ հատուցանել բաժանորդագիրը:

Մ Ո Մ Ի Պ Է Ս

(ԲՈՊԷՎԱԴԱԿ)

Ա.

Դէմ դիմաց էին խանութնիս, Գուլէ քաբուսի սանդուխներուն վրայ: Ան կարուհի էր, ես՝ նկարավաճառ. (խերդ կ'անիծեմ, եթէ և ի տեղ Գ դնես, պարոն գըրաշար):

Երբեմն թել մը դերձանի պատրուակով իր խանութը կը մտնայի՝ ու ներսը դիտելէ յետոյ դուրս կ'ելլայի կարմրելով, որովհետեւ անոր վրայ բռնվա կ'ընէր վարպետ հանրմը՝ վրդովիչ կերպով տէքովթէ poseի մը մէջ:

Ուրիշ ատեններ անոնցը մօտէլով՝ մերինն ալ պատկերներով լեցուն ցուցափեղկերուն բացուածքներէն մէկզմէկու կը նայէինք զուարթ գորտերու պէս:

Ամենէն ընթացիկ մեջկատակնիս էր մատնափունջ համբուրաբաշիումը! ...

" "

Օր մըն ալ դիպուածով (արդէն ո՞րքանին դիպուած ըսելով չենք անցնիր), իրենց աշխատանոցին մէջ մինակը գտայ Մաւին:

Մօտեցայ իրեն, ցուցամատս խածած, սկսնակ դերասանի մը վեհերոտ քալուածքովը. իսկ ան անուս տուաւ ֆրանսական արտասանութեամբ մը. — Լէօն ...:

Հոգեբանօրէն խօսելով (ո՞րչափ ալ օժընցուցինք սա հոգեբանութիւնը) խուսափուկ տարփանքի մը նուաղկոտ շեշտը գտայ այդ "Լէօն" ըսուածքին մէջ:

Կ'սպասէք որ անոր մօտենալու հովի պէս վայելքիս պարծենկոտութիւնն ընելու չափ խեղճ ըլլամ հիմա: Չէ':

ՄԻՆՉ ԱՅՍ մինչ այն, վրայ հասաւ մատամը, վարդեալ հանրմը:

Երեսի ջուրով կծիկը դնէի, պիտի կասկածուէր: Ի՞նչ ընէի, ի՞նչ ընէի:

" "

Ա՛լ մի՛ պնդէք որ մինակ չարիքի համար ստեղծուած է սա սատանա ըսածնիդ. փորձով համոզուեցայ իր խրատէն, զոր փայլակի պէս լուսաւոր ու անոր պէս արագ՝ ականջս ի վար փսփսաց. "Գրասեղանին վրայէն մկրատը առ ու մատիդ ծայրէն կտործիկ մը կտրէ: Արունը պիտի արգարացունէ քիզի. իբր թէ ձեռքդ անզգուշութիւնով մը կտրած՝ հոտ վազած ըլլայիր բուրջով մը կապել տալու համար: Ը՞նտ ...:

" "

Այո՛, ըրի, իր պատուէրին վերջին բառին արտասանութեանը պէս կարճ ատենի մէջ:

Մառի խաշուած քարիտէսի պէս կարմրեր էր թէև, ու ես իմ յանդուգն ձեռնարկիս իրականացումովը հպարտ՝ դուրս ելայ խանութէն, մատիս խոստովէն աւելի՝ սրունքներուս ջերմը զգալով հիմա ...:

Բ.

Տարիներու մեծկակ տրձակի մը հետ՝ զգաստացումի շնորհը իջած է վրաս: Մըկրատին կամէական կտրատումէն յառաջ եկած խոցը շատո՞նց գոցուած է, իր նշանը միայն թողլով:

Հիմա, ամէն անգամ որ ալ նշանը աչքիս զարնէ, բանականութիւնս դէպ ի ետի ոստում մը կ'ընէ՝ պտըտելու համար անցեալին ա՛րդէն քալուած ճամբաներէն:

Ան ատեն է որ մէկիկ մէկիկ միտքս կուգան տղայութիւններս, սիրաբանել փորձելու համար անցուցած անքուն գիշերներս, յուզումներս, քիչ մը ժպտուն նայուածքէ մը վրդովեցներս, բոլոր այն բաները վերջապէս որ ան ատենի Լեւոնը կը յիշեցունեն իմ եսիս:

Ու այս յետադարձ վերյուշութեան յուշիկ տողանցումը արբունքի այժմեան տարիքիս մէջ՝ մտածել կուտայ ինծի աշխարհքին բոլոր սէրերուն վրայ. կը խորհիմ որ ատոնցմէ շուտը մոմի մը կեանքը ունեցած է

յաճախ . անոր անբծութեան գոյնովը խոր-
հրդանշանուած , ու անոր պէս ալ դիւրալոյց :

Դեռ նոր վառիլ սկսած , կամ — միեւնոյն
բանը — մատիկ մը վառած , յանկարծ բո՛ւհնէ :
Հով մըն է որ կը փչուի չը գիտես ի՞նչ ան-
գթութեամբ , մոմիկ բոցէ լեզուն մեռցնելով :

„”

... Մոմը կը մարի , պատրոյգը կը միայ
քիչ մը ասեն : T. O.

Գ Ա Ր Ե Ջ Ո Ւ Ր

Անգլիական հանդէս մը , Եւրոպիոյ մէջ
տարին որչափ գարեջուր սպառելուն նկատ-
մամբ հետեւեալ տեղեկութիւնը կուտայ :

Անգլիա մէկ միլիառ կալօն , Գերմա-
նիա 900 միլիոն , Աւստրիա 269 միլիոն ,
Պելճիկա 180 միլիոն , Հոլանտա 33 միլիոն ,
Տանիմարկա 30 միլիոն , Հունտ 20 միլիոն ,
Ջուրիցերիա 17 միլիոն , և Նորվեգիոյ մէջ 16
միլիոն կալօն գարեջուր կը սպառի եղեր .
ստոր մէջ չէ աւելի քիչ սպառող քաղաքները :

Արդ , մէկ կալօնը 4 լիթրա հաշուե-
լով , տասը միլիառ 738 միլիոն լիթրա կը-
նէ և մէկ լիթրայէն չորս գաւաթ լեցունե-
լով , եթէ գաւաթը 20 փարա հաշուենք ,
429 միլիոն 520 հազար ոսկի մի միայն գա-
րեջուրի համար կը ծախսեն Եւրոպացիք :

Նոյն հանդէսը կը յարէ . իրաւոր ձիե-
րը մարդիկներէ աւելի խելացի են պիտի ը-
սենք , որոնք , փոխանակ միայն ջուրը խմե-
լու , բուն գարին կուտեն , և առանց կուտ մը
վճարելու :

Մարդկային ամբողջ պատմութիւնը սա
երեք բառերուն մէջ կը բովանդակի .

Ծնիլ , Տառապիլ , Մեռնիլ :



Խ Ն Ա Յ Ո Ղ Ա Կ Ա Ն (?)

ԵՐԿՈՒ ԴՐԱՑՈՒՀԻՔ

Քա ճանրմ փառանձեմ հանրմ , քեզի
բան մը պիտի հարցունեմ :

— Խեր ըլլայ Էլպիս տուտու , սա բէք
թէլաշի մէջ կը տեսնամ կոր քեզ :

— Հոգի , ինտո՞ր թէլաշ չընեմ . եւ-
մէտիյի օթու եէրսէ՝ պաշը աղըրը կըսեն նէ՝ ի-
րաւէ եղեր . հօրերնէս մօրերնէս տեսածնուս
պէս չընենք նէ՝ իշթէ ասանկ փորձաքի կը
հանդիպինք :

— Շիտակ է :

— Ամա խապտհաթը վարդանէսինս է ,
ես իրմէն սապօն ուզեցի՝ ան նիգօնօմեա ըլ-
լայ տէյի ինծի գնաց թօզ մը բերաւ , կիւզե-
լիմ՝ չամաշըներս եօխ ըրաւ :

— Ի՞նչ եղաւ քի .

— Անցած գիշեր՝ վաղը չամաշըր պիտի
վլամ սապօն պէտք է ըսի նէ՝ սապօն չուզեր ,
ես թօզ մը պիտի բերեմ , ըսաւ . հաթաս՝ ան
արա՝ Սիմա հանըմենք մեզի էին , անոնք ալ
ըսին քի 5—6 ամիս է մենք ալ ադ թօզէն
խուլլանմիշ կըլլանք կոր , հէմ խօլայութիւն հէմ
բէք ըռահաթութիւն է :

— Բէք աղէկ :


— Էրթէսի օրը վարդիկս բաքէթ մը
թօզ բերաւ , «Ոչինչ է պիտոյի պէս էրկան
թարիֆա մըն ալ հետը , ինծի կարդաց , ես
ալ անոր կէօրէ չամաշըրըս վլացի , երէկ փը-
ռեցի . իրիկունը ժողուեցի նէ՝ չըթըր չը-
թըր պաշլայեց չըթուտալ , խազըիս է կըրեէր ,
կիւզէլիմ՝ չամաշըներս եօխ եղաւ . սա ալ գը-
լոխս պիտի գայ եղեր , վախնամ չիւրիւթմիշ
ընէ :

— Ատիկայ ո՞ր թօզն է , չիւնքի մէկ
երկու թիւրլիւ թօզ կայ :

— Ես ի՞նչ դիտնամ հոգի , մէջը սօտա
չի կայ ըսեր է ամա՝ կիտնալս՝ սօտայէն պաշ-
լաւ մէջը բան չի կայ :

— Քեզի բան մը ըսեմ , իրիկունը տղեզ
հասկցիր անոր անունը , ես քեզի կըսեմ ինչ
ըլլաւ :

(Հոր .)



ՀԵՌԱԳԻՐԱԿԱՆ

ԱժժՈՒՆ ԲՈՇՈՇԻԿ ԵՒ ԸՆԿ

Բարիկ

Պ. Տօնապետեան իր հրատարակած մեղադրութիւնովը կը յայտարարէ թէ՛ երկու ամիս բաւական է հաղարբէկի մօտ կենալով անոր բնաւորութիւնը սերտելու եւ անկէ բաժնուելու։ Այս յայտարարութիւնը կարգացողներն ալ կըսեն թէ՛ քանի որ այդպէս էր, Պ. Տօնապետեանին խելքը ո՛ւր էր որ փարիներով կոյր զգուրայն հետեւեցաւ այդ մարդուն։

Վառնա

Տնօրէնուհի մը, իր ընթացքը քննադատող լրագրի մը իբր պատասխան՝ գործաւորութիւններուն վրայ ճշում բանեցնելով իրմէ գոհ ըլլալին յայտարարող թուղթ մը ստորագրել տուաւ, բայց ստատան իր պօշովը կաղամարը կորզեց եւ թուղթը երկփայրկեանի մը մէջ ծածկեց մեղանով։

Անվհատ օրիորդը երկրորդ մը պատրաստելով՝ զրկեց զայն խմբագրատուն, ուր պատնի վայր կախուած և պաշտօնէ դադրած թուղթերուն մէջ տեղաւորուելու պատուոյն արժանացաւ։

Մուսալլա

Հրապարակի վրայ ռօզ բուստրա շատ կը փնտռուի կոր, ջերմի հիւանդութենէ առաջ եկած դէմքի դեղնութիւնը ծածկելու համար։ Մինակ՝ սեխը շատ ուտելէն հիւանդացողին երեսին գոյնը դիւրութեամբ իր տեղը չի գար կոր. ասոր համար, ըստ մաս-

նագիտաց, ոչ թէ ռօզ տեսակէն այլ խորասանի փուտրա մը պէտք է։

Աւիցա Տրակոման

Նստած ելած տեղը հագուստի կահուստի վրայ ճոռոմաբանող պարոն մը, երկու օրէ ի վեր, հագած բանթալոնին պատուած յատակը ծածկելու համար ձեռքերը ետին կապած սկսաւ պտտիլ։

Երէկ Մուսալլայի հրապարակէն ըշտապաւ անցնող օրիորդ մը ծիծաղներու հոսանքի մը մասնուեցաւ, որովհետեւ գլխարկը քէրս դրած էր։

Սասուն, Մասիս եւ Արարատ անուն որձարաններու առջեւը դրուած աթոռները պաշտօնագուրի եղան, իսկ սեղանները հանգստեան թոշակի արժանացան։



ՀԱՐՑ—ՊԵՏԱՍԻԱՆԻ

Ինչո՞ւ համար կանանց հաւատարմութիւնը միշտ կասկածի տակ է։

— Որովհետեւ արանց անհաւատարմութիւնը անկասկած իրողութիւն մըն է։

Փիլիսոփայի մը հարցուցին թէ ամուսնութիւնը երբ երջանկաւէտ կրնար ըլլալ։

— Երբոր էրիկը խուլ եւ կինը կոյր ըլլար։

Գեղեցիկ ու տգեղ կնկան մէջի տարբերութիւնը քանի մը տարի է միայն։

Պատճառը ի՞նչ է որ մօրուքը սեւ՝ բայց գլխուդ մազերը ճերմկեր են, հարցուցին ծերուկի մը։

— Վասն զի մօրուքս գլխուս մազերէն 20 տարի ետքը ծնաւ։

Խտրագմ.



Անցած օր կին մը, որ Ռուսճուգի փողոցներէն կ'անցնէր՝ տան մը դրանը առջեւ կեցող խաթունի մը հետ սա կարճ խօսակցութիւնը ունեցաւ.

Ի՞նչ կընես կ'որ խաթուն.

— Ի՞նչ պիտի ընեմ, առտուընէ մինչեւ իրիկուն միս մինակ պատն—երեսին նստելէն սիրտս նեղանալուն՝ պաղի պաղի ասանկ դուռը կելլամ:

— Աղէկ ա', չեղլա՞ս Միսակդ հալ եօլ մը ընես, հէմ տունդ կը շէննայ հէմ սիրտդ չի նեղանար.

— Ախ ես վրում, մէկ—երկու հեղ ոտքի ելայ ամա՛ խոստովանանք մնայ, հէմ խման է հէմ քիւֆիւրպաղ է ըսելով չի տըւին:

— Ատ ի՞նչ ըսել է, պէլքի կարգուելէն ետքը խելքը գլուխը կը ժողուէր:

— Ես ալ ատանկ ըսի ամա՛ խուլլու խուլլունտան վաղ կէշմեզ, կըսեն կոր:

— 0 —

Պարոն Կակոս իր կնոջն հետ հանրային պարահանդէսէ մը տուն վերադարձած միջոցին կըսէ.

— Վէրոն, այս գիշերուան ըրածդ վայլէց.

— Ի՞նչ ըրի որ...

— Ալ ի՞նչ պիտի ընէիր, այն խարտեաշ երիտասարդին հետ չըրածդ մնաց:

— Ոհ, գուցու՞մ Կակոս աղա, պարապ բաներու կարեւորութիւն կուտաս,

— Ի՞նչ ըսիր...

— Զուարճանալու համար քիչ մը հետն ինկայ, պարզ կատակ էր ըրածս.

— Կատակ մի, հապա քեզ ճանչնալու ըլլար նէ... կարգուած կնկան կը վայլէ:

— Կարգած ըլլալ յայտնի չըրի. քեզի համար հայրս է ըսի, խեղճ տղան մինչեւ հիմա զիս աղջիկ կը կարծէ:



ՀԱՆԵԼՈՒԿ

թիւ 22

Տակաւին լուծուած չէ, նուէրն է երգարան մը:

Լուծումն կցելի գրերու

ՃԱԳԱՐ — ՔԱՐԲ — ՄԱՔԻ — ՍԿԻՌ

Յաւելեալ չորս գրերէն կազմուած կենդանիի մը անունն է՝ ԱՔԻՍ:

Ե.

Լուծումն թիւ 6 նկարհանուկի

Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւատարեցաւ անտանոց:

Վ. Ս.

ԱԶԴ

Այցետոմս, հասցետոմս. նամակագլուխ, հրաւիրատոմս, բարենիշ, տոմոակ, հալլն հալլն թէ՛ պարզ և թէ՛ սակեզօծեալ սէկ քանի գոյներով կը տըւապարուին: Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք փութով կը կատարուին: Գին գոհացուցիչ: Դիմել Հաւելի խըմբագրութեան:

— 0 —

ԱԶԴ

Երկուշաբթի օրը, ըստ Առևտրական նոր դրու-
թեան երկրորդ վիճակահանութիւնը քաշուե-
ցաւ Օթէլ Սօփիաի մէջ. շահող թիւերն են.

Ա. թիւ 2128 25 ֆրանք

Բ. թիւ 153 5 ֆրանք

Մէկ մէկ ֆրանք շահող թիւերն են.

3360 2675 1938 2411 1929 46

1188 2583 3952 1834 2695

3347 2008 1682 1986 3209

1017 1894 856 973

Պարգեւաց գումարէն հարիւրին 30ը զեղ-
չուելով պիտի յատկացուի ի նպաստ որբե-
րու մեր կողմէն պատրաստուելիք Սիկարի
թուղթերուն նախնական ծախուց. ասոր հա-
մար կը խնդրուի օգոստոս 1ին պարգեւ առ-
նողներէն, որ բարեհաճին իրենց բաժինը
վճարելու, որպէս զի ժամ առաջ սկսինք
այս գումար մարգասիրական ձեռնարկութիւնը:

Համբարձում Ս. Կիւմիւշճեան

1 Սեպտ. 1897

Վառնա

100 Այցաբարտը երկու ֆրանքի կը
տպագրուին: Դիմել «Հայլի» խմբագրու-
թեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարարու-
թեան թղթատարին ծախք 30 սանդիմ յանձ-
նարարողին վրայ է: Դրամի փոխարէն Պուլ-
կարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նամա-
կադրօշմ կը նդուենուի:

ՏՕ-ԲԹ. Ե ԹՈՎՄԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ վերադարձած է Սօփիաէ
և կընդունի հիւանդներ ամեն օր իր տունը
ի Պալլադ Բազար, առաւօտները ժամը 10էն
12, իսկ կէս օրէն վերջը 2էն 5: Չորեք-
շաբթի օրերը կէս օրէն վերջը ժամը 2էն 5
ձրիապէս կը գարմանէ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԵՑԱԻ

ՆՈՐ ՔՆԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ

ԿԱՄ

ՀԱՒԱՔԱՅՐՈՅ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԱԶԴ. ԵՐԳԵՐՈՒ

ՄԱՍՆ Ա.

ԴԻՆ 2 ՅՐԱՆԻ

— 0 —

Սոյն երգարանը որուն անհամբեր կ'սպասուէր ժա-
մանակէ մ'ի վեր, 216 էջերով, մեծ խնամքով սրբա-
դրուած, բայց ի հին ընտիր երգերէ կը պարունակէ նաեւ
բազմաթիւ նոր երգեր:

Փափաքողք պէտք է դիմեն տա Մ. ԽԱՉԻԿԵԱՆ՝
Արեւելեան տպարան, Չրդ. Ուշասթ թիւ 1104 ՎԱՌՆԱ.
Վառնայէ դուրս և օտար երկիրներէ պահանջուածնե-
րուն իւրաքանչիւրին վրայ պէտք է աւելցնել 20 սան-
թիմ իրր բօսթայի ծախք:

— 0 —

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ

(ՊՈՒԼԿԱՐԻԱ)

Գ. Յ. ԲԱՐԹԱՄԵԱՆ և Բ. Է. ԲԱՆՉՈՒՓ

Վառնա Ծրդ թաղ Ելտըղ Թապիս

Ամէն տեսակ մեքենաներու. շինութիւն և
նորոգութիւն, ջաղացքի թէ՛ շոգիով և թէ՛
պարզ ջուրով գործող մեքենաներ, նաեւ շո-
գեմակոյկներ. ջաղացքի վերաբերեալ ամէն
տեսակ երկաթեայ գործիքներ, դրամական
գասաներ, շէնքերու յատուկ երկաթեղէն-
ներ, տեսակ տեսակ ջրհաններ և այլն
կը պատրաստուին: Պատ. Յաճախորդք միշտ
գոհ մնացած են սոյն գործարանի շինու-
թիւններէն:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԷ

Ռուսճուգ	Տիարք Եղբարք Սարաֆեան:
Սիլիսդրէ	Տիար Արթաքի Սարգսեան:
Հաւմլա	Յովհաննէս Մաճարեան:
Սօփիա	Յակոբ Ծերունեան:
Լոնտոն	Հայկ Աստուածատու

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ

Печатница «Взаимность» — Варна.